ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանն աշխատանքային այց կատարեց Բյուրական և Օրգով համայնքներ

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը նոյեմբերի 15-ին այցելեց Բյուրական և Օրգով համայնքներ: Մարզպետը հանդիպեց բնակիչների հետ, ծանոթացավ համայնքներում առկա հիմնախնդիրներին, քննարկվեցին դրանց լուծման հետ կապված հարցերը:

Բյուրական համայնքում մարզպետ Դավիթ Գևորգյանը պատասխանեց համայնքում սեփականաշնորհման գործընթացի, հակակարկտային միջոցառումների, ջրային ռեսուրսների արդյունավետ բաշխման, բնական աղետների պատճառած վնասների փոխհատուցման մեխանիզմի, գազաֆիկացման և մանկապարտեզի ընդլայնման վերաբերյալ բնակիչների հարցերին:

Օրգով համայնքում բնակիչները մարզպետին դիմեցին գազաֆիկացման, դպրոցի վերանորոգման և անվանափոխման, բուժամբուլատորիայի անհրաժեշտության, միջհամայնքային ճանապարհների վերանորոգման, հասարակական տրանսպորտի և համայնքի լուսավորության խնդիրներով:

Լսելով բնակիչներին՝ մարզպետ Դավիթ Գևորգյանը ընդգծեց պետական պաշտոնյայի և բնակչի միջև առկա անջրպետի վերացման անհրաժեշտությունը: Նա ասաց, որ մարզը ղեկավարելու է ոչ թե մարզպետարանից, այլ մշտապես այցելելու է քաղաքներ և գյուղեր, բնակիչների հետ անկեղծ և պարզ քննարկումների միջոցով բացահայտվելու են առկա հիմնախնդիրները, և քայլ առ քայլ լուծում են տրվելու բոլոր հարցերին, քանզի անլուծելի խնդիրներ չկան:

Բարձրացված բոլոր հարցերին տրվեցին սպառիչ ու հստակ պատասխաններ, ներկայացվեց ամեն խնդրի լուծման տարբերակը, միջոցներն ու քայլերի հաջորդականությունը: